ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «27» 04 2017թ. № 397-Ն

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի «Մաքսային միությունում կիրառվող սանիտարական միջոցների մասին» №299 որոշման N3 հավելվածի N1 հավելվածը, «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «12.1» կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել արտադրանքի եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի՝ արտադրանքի պետական գրանցման վկայականի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին՝ ապահովել սույն հրամանի հավելվածով հաստատված պետական գրանցման վկայականի տպագրությունը և համապատասխանության գնահատման մարմիններին տրամադրումը:

3. Սահմանել, որ գրանցման վկայականի տրամադրվող համարի 1-ին խմբի լրացման համար հիմք ընդունել երկրի երկնիշ կոդը Հայպետստանդարտի 1999 թվականի մարտի 2-ի «Երկրների անունների դասակարգիչը հաստատելու մասին» թիվ 3-99 հրամանը:

4. Սահմանել, որ գրանցման վկայականի տրամադրվող համարի 2-րդ խմբի լրացման համար հիմք ընդունել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2016թ. նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Վարչատարածքային բաժանման միավորների» դասակարգիչ հաստատելու մասին» թիվ 1209-Ն հրամանով հաստատված ՀՀ վարչատարածքային բաժանման միավորները:

5. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին՝ ապահովել գրանցման վկայականի տրամադրվող համարի 3-րդ խմբի լրացման համար կազմակերպության երկնիշ՝ թվատառային կոդի տրամադրումը տարածաշրջանի համար յուրահատուկ (01-99 թվերով և ռուսերեն АА-ЯЯ մեծատառերով, հնարավոր է նաև տառաթվային համադրությամբ և տեղեկացնել միասնական ռեեստրին):

6. Առաջարկել ՀՀ համապատասխանության գնահատման մարմիններին՝ գրանցման վկայականի տրամադրվող համարի 4-րդ խմբի լրացման համար սահմանել տվյալ կազմակերպության համար յուրահատուկ աշխատանքային տեղի երկնիշ կոդը, որը ձևավորվում է կազմակերպության շրջանակներում:

7. Սահմանել, որ արտադրանքի պետական գրանցման կարգն իրականացվում է Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով, կամ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի «Մաքսային միությունում կիրառվող սանիտարական միջոցների մասին» №299 որոշմամբ, կամ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի «Պարենային և ոչ պարենային արտադրանքի գրանցում իրականացնող իրավասու մարմիններ սահմանելու մասին» №1339 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:



ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի հրամանի
2017 թ. ---------------N -Ն

ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ СОЮЗ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

_______________________________________________

(уполномоченный орган государства – члена Евразийского экономического союза)
(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազոր մարմինը)

_______________________________________________

(руководитель уполномоченного органа)
(լիազոր մարմնի ղեկավարը)

_______________________________________________

(наименование административно-территориального образования)
(վարչատարածքային միավորի անվանումը)

# СВИДЕТЕЛЬСТВО

## о государственной регистрации

## Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

## ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

№

от г.
թ. -ից

**ПРОДУКЦИЯ:**
**Արտադրանք**

_______________________________________________

(наименование продукции, нормативные и (или) технические документы, в соответствии с которыми изготовлена продукция, наименование и место нахождения изготовителя (производителя), получателя)

(արտադրանքի անվանումը, նորմատիվ և (կամ) տեխնիկական փաստաթղթերը, որոնց համապատասխան արտադրված է արտադրանքը, արտադրանք արտադրողի, ստացողի անվանումը և գտնվելու վայրը)

**СООТВЕТСТВУЕТ**

Համապատասխանում է

---

прошла государственную регистрацию, внесена в Реестр свидетельств о государственной регистрации и разрешена для производства, реализации и использования

անցել է պետական գրանցում, ներառված է պետական գրանցման վկայականների ռեեստրում և թույլատրված է արտադրության, օգտագործման և իրացման համար

Настоящее свидетельство выдано на основании (перечислить рассмотренные протоколы исследований, наименование организации (испытательной лаборатории, центра), проводившей исследования, другие рассмотренные документы)).

Սույն վկայականը տրվում է հիմք ընդունելով (թվարկել ուսումնասիրված փորձաքննության արձանագրությունները, հետազոտություններ իրականացնող կազմակերպության (փորձարկման լաբորատորիա, կենտրոն) անվանումը, այլ ուսումնասիրված փաստաթղթեր):

---

Срок действия свидетельства о государственной регистрации устанавливается на весь период изготовления или поставок подконтрольной продукции (товаров) на территорию Евразийского экономического союза

Պետական գրանցման վկայականի գործողության ժամկետը սահմանվում է հսկողության ենթակա արտադրանքի արտադրման կամ Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծման ամբողջ ընթացքի համար:

Подпись, ФИО, должность уполномоченного лица, выдавшего документ, и печать органа (учреждения), выдавшего документ

Փաստաթուղթ տրամադրող լիազոր անձի ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը և փաստաթուղթ տրամադրող մարմնի (հաստատության) կնիքը

---

(Ф.И.О./подпись)

(ազգանունը, անունը, հայրանունը /ստորագրությունը)

М.П.

Կ. Տ.

ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ СОЮЗ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

______________________________________________

(уполномоченный орган государства – члена Евразийского экономического союза)
(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազոր մարմին)

______________________________________________

(руководитель уполномоченного органа)
(լիազոր մարմնի ղեկավարը)

______________________________________________

(наименование административно-территориального образования)
(վարչատարածքային միավորի անվանումը)

# ПРИЛОЖЕНИЕ

## К СВИДЕТЕЛЬСТВУ О ГОСУДАРСТВЕННОЙ РЕГИСТРАЦИИ

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ

От г. №

թ. ------------------------ -ից

(информация, не вошедшая в текст свидетельства о государственной регистрации)
(տեղեկատվություն, որը ներառված չէ պետական գրանցման վկայականի տեքստում)

Подпись, ФИО, должность уполномоченного лица, выдавшего документ, и печать органа (учреждения), выдавшего документ
Փաստաթուղթ տրամադրող լիազոր անձի ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը և փաստաթուղթ տրամադրող մարմնի (հաստատության) կնիքը

---

(Ф.И.О./подпись)

(ազգանունը, անունը, հայրանունը /ստորագրությունը)

М.П.

Կ. Տ.